ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ - Ա

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՊՈՄՊԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԻՉ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՎԱՀԱՆԱԿԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՀՐԱՏԱՊ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման թիվ 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի վարչական ղեկավար Մակար Սարգսյանի 2022 թվականի մայիսի 17-ի զեկուցագիրը, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի խմելու ջրի խորքային պոմպը խափանվել է, և բնակավայրի բնակիչները զրկվել են խմելու ջրից՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Սպիտակ Հարթագյուղ բնակավայրի խմելու ջրի խորքային պոմպի և պաշտպանիչ էլետրական վահանակի ձեռքբերումը համարել հրատապ: